

**ՂԱՐՑԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՆԱԽԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ և ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՊԱՇԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՐԴԻ ՂԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Ս. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
ԴՊՄԴ գեղմանակամ լեզումների ամբիոնի դասախոս**

Լեզուն մտածողության և մտքերի արտահայտության միջոց է և դրսնորվում է խոսքի միջոցով, իսկ խոսքը հարուստ է զանազան նրբերանգներով: Խոսքի միջոցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը հաղորդվող նյութի վերաբերյալ, ինչպես նաև նրա հոգեվիճակը տվյալ պահին, խոսքի ազդեցության նպատակը և այդ նպատակին հասնելու արտասանական հնարյակ: Ամեն մի դատողություն, հարցում, հրաման, գայրույթ, իղձ, հորդոր և այլն կատարվում են ձայնի, տոնայնության ելաչքների, առօգանության միջոցով, այսինքն նախադասությունները տարբերակվում են հնչերանգային առանձնահատկություններով: Սակայն նախադասությունների հնչերանգային դասակարգումը կատարելիս բացի արտասանական առանձնահատկություններից՝ հաշվի են առնվում նաև նախադասության կառուցվածքային մի շարք հատկանիշներ: Եսկան դեռ ունի նախադասության ստորոգայի արտահայտությունը, մասնավորապես՝ պարզ ստորոգայի եղանակը: Բայի եղանակաժամանակային քերականական կարգերից բացի՝ նախադասության հնչերանգային տիպերի ձևավորմանը մասնակցում են նաև բառային զանազան միջոցներ՝ վերաբերականներ, ձայնարկություններ, հարցահարաբերական դերանուններ: Տարբեր քերականներ տարբեր ձևով են դասակարգել նախադասություններն ըստ հնչերանգի: Ըստ եռթյան՝ քերականների մեծ մասը հակված է նախադասության չորս երանգների ընդունմանը՝ պատողական հարցակամ, հրամայակամ, բացականչակամ: Այս դասակարգման դեպքում ըղձականը հանարվում է բացականչականի տեսակ, իսկ խառը նախադասությունները քննության չեն առնվում, քանի որ նրանք կազմված են հնչերանգային տարբեր տիպեր ունեցող բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրն ուսումնասիրվում է առանձին:

**Դարցական** նախադասությունները հիմնականում կիրառվում են երկխոսությունների ընթացքում, քանի որ խոսողի հարցուն ինքնին ենթադրում է նաև խոսակցի պատասխանը: Դարցական նախադասությունների ստորոգայի քերականական տեսակետից որևէ առանձնահատկություն չունի, այն արտահայտվում է բայի գորեք բոլոր եղանակներով: Պարզ հարցական նախադա-

սությամբ սովորաբար միայն մեկ հարց է տրվում, և միայն մեկ անդամն է հարցում արտահայտում: Եթե նախադասության մեջ կան բազմակի անդամներ, որոնց մասին տվյալ դեպքում հարցում է արվում, ապա բրանք բոլորն էլ արտասանվում են հարցական հնչերանգով. ինչպես օրինակ՝ Արդյոք քեզ **Ե՞ր եմ, Ե՞ր եմ** տեսնելու (ՊՍ, 78): Ու քայլում էի նաև... մտացիր// **Մտացի՞ր** արդյոք, **մտամկի՞ր** արդյոք... (ՊՍ, 58):

Եթե նախադասությունը բարդ է, այդ դեպքում հարցումը կարող է լինել մեկից ավելի, օրինակ՝ **Խարու՞ն էիր** ինձ այսքան ժամանակ,// **Թե՞** քեզնից նաև իմրե էիր խարված (ԼԲ, 53): **Տիեզե՞ղքը է** ինձանով լի,//**Թե՞** ես եմ լի տիեզերով (ՀՍ, 45):

Յուրաքանչյուր պատմողական նախադասություն իհմնականում հնարավոր է վերածել հարցական նախադասության տարրեր միջոցներով: Հարցական նախադասությունը պատմողականի փոխակերպելիս հարցական հնչերանգ ունեցող բառն ունենում է տրամաբանական շեշտ, օրինակ՝ Ընկե՛ր Փիլոյան, Դուք **ընկեր Փիլոյանը չե՞ք** (ԺԱ, 88):

Հարցական նախադասությունները մեծ մասմբ ծևավորվում են հարցական դերանուններով, որոնց վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտը հարցական հնչերանգի հետ՝ ինձ **ո՞վ** պիտի համի բանտից այս անսահման,// **Ու՞ն** փրկարար շունչը կիշճի պաղ իմ հոգուն (ԼԲ, 92): Հարցական նախադասության ծևավորման մեջ դեռ ունի նաև շարադասությունը. ամենից առաջ **ո՞վ, ի՞նչ, ինչպիսի՞ն, որպիսի՞ն, ու՞ն, որքա՞ն, ինչքա՞ն** և այլ հարցական դերանունները շարադասվում են նախադասության սկզբում և առաջ են բերում իշնող հնչերանգով հարցական նախադասություններ: Այս հարցական դերանուններին անմիջապես հաջորդում է ստորոգալը՝ էլ **ո՞վ** էր ասում,// Որ այնքան ծանր հոգսերը նրա // Առնեիր քո թույլ ուսերի վրա(ՀՍ, 21): Խաղաղ օրերը գնում են ձերից, // **Ի՞նչ** է լինելու, մարդ **ի՞նչ** իմանա (ՀՍ, 22): **Ի՞նչ** ունենք էլ աշխարհում, // Որ այսքան մերը լինի (ՀՍ, 51): Նախադասության սկզբում են շարադասվում նաև **մի՞թե, չ՞ե՞լո՞վ, թե՞հարցական բառերը**: Սակայն հնարավոր է նաև, որ թե՛ հարցահարաբերական դերանունները, թե՛ վերաբերականները նախադասության սկզբում չլինեն: Այդ դեպքում նրանց սովորաբար նախորդում է կոչական կամ ենթակա, օրինակ՝ Անգե՛տ տղաներ, **մի՞թե չգիտեք** // Մեր միակ փրկչի սուրբ գերեզմանի վայրը սրբազն (ՊՍ, 50):

Ժամանակակից հայերենում առանձնացվում է հարցական նախադասության կառուցվածքային երեք տիպ:

1. Հարցական նախադասություններ, որոնք կառուցվածքով համընկնում են պատմողականին, բայց արտաքերվում են հարցական հնչերանգով. Նայեցե՞ք, նայեցե՞ք որությունը ինձ չե՞ք ծանաչում // Ես սիրել եմ աշխարհի այնքան (ԵԶ, 8):

2. Նախադասություններ, որոնց մեջ կան հարցական վերաբերականներ, որոնք ստվորաբար լինում են նախադաս, բայց կարող են լինել նաև այլ շարադասությամբ՝ *Մի՞թե, մի՞թե* պիտի քեզ գովերգեմ նորից, // Քեզ, ում չեմ ուղարկում էլ երբեմ հիշել (ԼԲ, 99): Իսկ ու՞ր է տարվա մե՞ր եղանակը, // Այն հիմնգերորդը... *մի՞թե* չի գալու... (ՊՍ, 16):

3. Նախադասություններ, որոնց մեջ կան հարցական դերանուններ. *Ո՞վ* քեզ ծեծեց, Մարո՞ ջան (ՅԹ, 21): Այս նախադասություններն ունեն կառուցվածքյին առանձնահատկություն. Եթե նրանց մեջ կա օժանդակ բայով կազմված պարզ ստորոգյալ, ապա օժանդակ բայց անպայման տեղափոխվում է հարցական դերանունից կամ դրա բառախմբից հետո, օրինակ՝ Էլ *իմչու՞* էիր այդքան թոթորում, // Էլ *իմչու՞* էիր դրա քոթորում, // Էլ *իմչու՞* էիր ականջդ սրում, // Որ նրա ամեն շշովկը բռնես (ՅՍ, 21): Սակայն բաղադրյալ ստորոգյալի դեպքում այս փոփոխությունը չի կատարվում, օրինակ՝ Բայց *իմչու՞* օրենք է հավերի ուտելը (ՅՍ, 65): Իմաստային առանձնահատկությամբ տարբերակում ենք.

ա) Բուն հարցում. հարցը տրվում է այն դեպքում, երբ հարցմողը ցանկանում է իմանալ իր հարցի պատասխանը, խոսողը հարցմում, ճշգրտում է իրեն անհայտ որևէ իրողություն, փաստ, օրինակ՝ Այնժամ գուցե բնազդաբար ես քեզ հարցեմ. «*Սիրո՞ ՞ ես ինձ»* (ՊՍ, 54): Հարցաժխտական և հարցահատատական նախադասությունները հարցի ծնով արտահայտում են Ժխտումն այն բանի, ինչ ասված է տվյալ հարցական նախադասության մեջ, երբ ստորոգյալը դրական է: Իսկ ստորոգյալը Ժխտական լինելու դեպքում արտահայտում են հաստատում: Այս հարցական նախադասությունները ծնավորվում են հատկապես *մի՞թե* եղանակավորիչ բառի միջոցով, որով ուժեղանում է հարցական հնչերանգը<sup>1</sup>: Համադասական նախադասություններում հաջորդ բաղադրիչը ստվորաբար կապակցվում է *չէ՞ որ* վերաբերականով՝ *Մի՞թե* նրան չես դիմավորել. *չէ՞ որ* խոստացել էիր (նամուլ): Կան կառուցներ, որոնցում կարող է նաև *մի՞թե-ն* չգործածվել, ինչպես՝ *Մի՞թս իմ, չէ՞ որ* այս աշխարհին //

<sup>1</sup> Ա. Արքահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոյսյան, Յայոց լեզու, Եր., 1975, էջ 47, Ս. Գյուլբուղադյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, էջ 69-75:

Խոսքեր ունենք դեռ ասելու (ՅՍ,78): **Զէ՞ որ չեմ տեսել քեզ այնքան** տարի,  
որքան տեսել եմ (ՊՍ,58):

Հավաստիական հարցի հաստատական պատասխանը, բացի **այլ** բա-  
ռից, կարող է արտահայտվել նաև **անշուշտ, իհարկե, անկասկած, անպայման,**  
**անպատճառ, անստարակույս** եղանակավորիչներով, իսկ ժխտականը՝ բացի **ոչ**  
բարից, նաև **բնակ, երթեք, ամենմիմ** բառերով: Հավաստիական հարցական  
նախադասություններում հաճախ կիրառվող **արդյոք, մի՞թե, չիմի՞թե** թե երկրա-  
յական հարցական եղանակավորիչները նախադասությանը հաղորդում են  
զգացական երանգ՝ Քարափնե՞ր են **արդյոք**, թե՞ ավերված բեղոքի, // Որ Սյու-  
նիքի ըմբռստ որդիք էին կերտել (ՅՍ, 100): Արժե՞ր, որ այդքան դու որտսայիր,  
// Եվ արժե՞ր **արդյոք**, որ աշխարհ զայիր (ՊՍ,52):

Բ) Լրացական հարցական: Այսպէս են կոչվում այն նախադասություննե-  
րը, որոնցով խոսողը դիմում է խոսակցին՝ կրկնակի հարցումով իմանալու հա-  
մար իր արտահայտած մտքի այս կամ այն տարրերը, օրինակ՝ Ես չեմ սխալ-  
վում, դուք Կնյազի կինն եք, **այդպես չէ?**(ԺԱ, 105): Ուրեմն Դուք իմ ամուսնու  
աշխատողն եք, **այ՞ո?**(ԺԱ, 100): Դու օտա՞ր չես, **չէ?**: Բայց ի՞նն էլ չես,  
**հա՞...**(ՊՍ,124):

Գ) ճարտասանական (հռետորական) հարցում: ճարտասանական հար-  
ցը, բացականչությունը, դիմումը հիմնականում պայմանավորված են հեղինա-  
կի կամ որևէ անհատի տրամադրությամբ և մեծ մասամբ վայրկենական տպա-  
վորության կամ ոգևորության արդյունք են, հարցական կամ բացականչական  
հնչերանգի միջոցով արտահայտում են դրական, հաստատական իմաստ, եր-  
թեմն նաև ժխտում, երկրայություն<sup>2</sup>, օրինակ՝ Զօքանչի լավը **լիմու՞ն է** (ԺԱ,  
116): Մարդ իր սեփական կնօքը **կիամբուրի՞ն** (ԺԱ,116): Մարդ իր սեփական  
կնօքը տեսնելու **համար է՞լ** պետք է ակնոց դմի (ԺԱ, 170): ճարտասանական  
հարցական նախադասությունը միայն իր ձևով և արտաքրումով է հարցա-  
կան. սա ըստ Էտրյան հաստատական նախադասություն է, որն իր մեջ պարու-  
նակում է իր պատասխանը. Բա սա **մա՞րդ է**. տղամարդը օրը ցերեկով **կընի?**  
(ԺԱ, 95): ճարտասանական հարցն ունի մի յուրահատկություն. դրական նա-  
խադասություններն արտահայտում են ժխտում, իսկ ժխտականները՝ հաստա-  
տում. Ես, ի՞նչ է, **չկամ թքչունի չա՞փ էլ** (ՊՍ, 87): -Աղջի՛, սևասի՛րտ, քու ահը  
կտրի, //Աղջիկը մենակ ծորը **կմոնի՞ն** (ՂԹ, 20): Քիչ ենք օգտվել մենք բարութ-  
յունից: // Եվ **դրանից չէ**, որ հետզհետև // Բարի են դարմում (ՊՍ,12):

<sup>2</sup>Տե՛ս Լ. Եղեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 361-362:

Հարցական նախադասությունների ստորոգյալը իր արտահայտության միջոցներով ու ձևերով բազմազան է: Այն լինում է պարզ և բաղադրյալ, արտահայտվում է.

ա) Սահմանական եղանակով՝ Ասում էի՝ գնա՛, գնա՛, բայց դե ինչու՞ դու գնացի՛,

Ասում էի՝ էլ մի՛ մնա, բայց դու ինչու՞ չմնացի՛ (ՍԿ, 25): Ի՞նչ ես տաճում. կամ թու'յլ եղիր, կամ արի՛ (ՊՍ, 250):

Բ) Ըղծական եղանակով՝ Ի՞նչ իմանաս պաղ քամուց էր, թե վախից, // Լամշերն ի վար ճչաց անտեր մի թախիծ (ՅՍ, 14):

Գ) Ենթադրական եղանակով. Կիեռանա՞նք, կմնա՞նք, թողնենք միայն դիպածին (ՍԿ, 205):

Դ) Հարկադրական եղանակով. Գուշակեցն՛ք, խնդրեմ, մարգարենե՛ր, հիմա... // Թե մինչև ե՞ր պիտի ես իմ տան մեջ միակ ավելորդը լինեմ (ՅՍ, 12):

Ե) Հրամայական եղանակով. Նա ասաց՝ գնա՞։ Սա, ըստ եռթյան, իրականացնում է ինքնանվանողական գործառույթ:

Հարցական բնույթ կարող են ունենալ նաև անդեմ և անենթակա նախադասությունները. **Փակե՞լ** աչքերը, չզգա՞ն, չըմրվգե՞լ, // **Սոռանալու՞** տալ, անգամ **մոռանա՞լ** (ՍԿ, 58): Հարցական նախադասությունների ստորոգյալը, ինչպես նշվեց, կարող է նաև բաղադրյալ լինել. Կնյազու որ դիպլոմ չունի, ումի՞ց է պակաս (ԺԱ, 107): Էդ մի գազ լեզուու որ չլինի, օրդ ի՞նչ օր է (ՂԴ, 189):

Բացականչական են այն նախադասությունները, որոնք արտահայտում են հիացմունք, զարմանք, ափսոսանք, խոսքի զգացական տարրեր երանգներ և արտաքերվում են բացականչական հնչերանգով, իսկ գրավոր խոսքում սովորաբար նշվում են բացականչական նշանով կամ շեշտով: Պատմողական նախադասության համեմատությամբ բացականչական նախադասության արտաքերումը ավելի բարձր է և տևական. **Ինչե՞ր** արավ պուրակում, // Պարզ է ինչ կանի, // Թրջված ու թավ մի պուրակ, // Մի քուռակ քամի (ՅՍ, 74): **Ինչքան** երգեր մոռացվեցին, **քանի՞-քանի՞** դեմք ու անուն (ԼԲ, 84): **Քանի՞** ծեռքից են վառվել, // Կառվել ու հուր եմ դառել... (ՅԹ, 214): **Ինչե՞ր** ասես որ չեն արել այս ծեռքերը, // Պսակվելիս **ո՞նց** են պարել այս ծեռքերը, // **Ի՞նչ** նազանքով, երազանքով (ՊՍ, 5):

Բացականչական նախադասություններ են ողջունները, բարի ցանկությունները, որոշ օրինանքներ, անեծքները, որոնք նույնպես հարուստ են հուզարտահայտչական նրբերանգներով. **Արև անպակա՞ն**, Կնյա՛զ ջան (ԺԱ, 96): **Տե՛ր աստված**, դու բարի՞ն կատարես... (ՊՍ, 74): **Աչքը լույս**, պետիդ աղջիկը

տղայիդ հարսնացում է (ԺԱ, 99): **Փա՛ռք աստծո,** ապրում է (ԺՅ, 21): **Չունե-նա՞մ քեզ,** չունենա՞մ (ԺԱ, 94): **-Ողջու՞ն քեզ,** անհայտ, անձանո՞թ ընկեր, // **Ող-ջու՞ն ծեզ,** վաղվա չծնվա՞ծ կյանքեր (ԵԶ, 32): **Տեսմե՞ն** բյուրավոր քո հրաշք-ները, // **Տեսմե՞ն** ծաղկունքիդ գույները պես-պես, // **Տեսմե՞ն** հողմերիդ գալա-րումը խենթ, // **Տեսմե՞ն, հիանա՞ն** (ՐԱ, 51): Այս ոճը հիմնականում բնորոշ է ա-ռօրյա-խոսակցական բնույրի նախադասություններին, քանի որ կենդանի խոսքը լի է զգացմունքայնությամբ: Բացականչական նախադասությունները: Սիանք իրենց գրեթե բոլոր հատկանիշներով նման են ճարտասանական բացականչությունները: Սիանք իրենց գրեթե բոլոր հատկանիշներով նման են ճարտասանական հար-ցերին, սակայն արտաքերվում են բացականչական հնչերանգով, և սրանցում ևս քերականական և իմաստային ժմտումն ու հաստատումը հակադարձ են: Բացականչական նախադասության ստորոգյալը մեծ մասամբ արտահայտ-վում է զղձական եղանակով. **Դանե՞ն** այս տանջող խոռվեն իմ սրտից (ԱԿ, 215): Երկու նունակ՝ կրծքիդ վրա... // Երանի՞ թե նրանց պայթյունն ինձ **սպա-մեր** (ՊԱ, 158): **Տա՞ն** պարանոց կարոտին այն երկնութեց, // Ու օրորվե՞ն եղե-րական ու անբասիր (ԵԶ, 78): Սակայն բացականչական կարող են լինել բայի նաև մյուս եղանակներով արտահայտված ստորոգյալները, օրինակ՝ **ԱՌ,** քեզ լինի, չեմ ուզում (ԺԱ, 120): Իրենց մեջք ու բամբով ամե՞ն ինչ եմ տարե՞լ, // Ողջ մարդկության ցեղի պատմությունը **Կրե՞լ,** // Իրենց սմբակներով պատ-մությունն այդ **գրե՞լ,** // Նրա փոշին **Մրե՞լ** իրենց պոչո՞վ (ՊԱ, 25):

Բացականչական նախադասություններում հաճախ բացականչական հնչերանգով գործածվում են.

ա) Զայնարկությունները. **Վայ,** ինչքան նման է ընկեր Փիլոյանին, ոնց որ ինքը (ԺԱ, 88): **ԱՌ** մարդ, զարաժմ ուր, խաչիկը՝ ուր... (ՅԺ, 335): **Է՛,** ոնց ասում են՝ մարդ մարդու ցավից տեղյակ չի, գիշերը ժամ է կանչում (ԺՅ, 270): **ԱՇ,** նո-րից «Բարի ճամփա», // **ԱՇ,** նորից «Մնաս բարով» (ՐԱ, 20): Զայնարկություն-ների հետ սովորաբար գործածվում են կոչականներ, որոնք խոսք դարձնում են ավելի կենդանի, շեշտակի և կտրուկ. **ԱՌ** ապրես, **Նազա՞ր,** **ո՛նց** է քշում (ՂՂ, 221):

Բ) Յարցահարաբերական դերանունները. **Ի՛նչ** ես թռչում, խս-դևս սի՞րտ, // Յազար բանի ետև, սի՞րտ (ՅԹ, 212): **Ինչքա՞ն** ցավ եմ տեսել ես, // Նենգ ու դավ եմ տեսել ես (ՅԹ, 209):

Գ) Եղանակավորող բառերը. **Ավա՞ն,** ամեն ինչ այլ վախճան ունեցավ:

Դ) Պատմողականների նման նախադասություններ. Ինձ ներս ու դրսից կապույտ հազցրու (ՊԱ, 5): Ճանփորդությա՞ն ենք մեկնելու:

Ե) Զայնարկություն+ դերանուն զուգորդումներ. *Այս, ի՛նչ* լավ են սարի վրա // Անցնում օրերն անուշ-անուշ (ՅԹ, 87):

Բացականչական նախադասությունների շարժում կարևոր տեղ են գրավում անդեմ նախադասությունները. *Ապրե՛լ, ապրե՛լ*, այնպե՞ս ապրել, // Որ սուրբ հոդի երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը (ՊՍ, 41): *Սուզգե՛լ* ամտես՝ աղբյուրների կարկաչում, // *Դարբե՛լ, հարբե՛լ* ու մոռամաշ՝ աջորյան (ԵԶ, 25):

Բացականչական նախադասության մեջ բացականչական նշանը դրվում է ձայնարկությունների, ինչպես նաև բացականչական հնչերանգով արտաքերվող բարի վրա. *Այս*, այդ բիճե՛րը, // Որ ծեր են ծնվել... (ՊՍ, 18): Նամատարած ծի՛չ է, համատարած կա՛նչ է, համատարած գորո՛ց (ՊՍ, 58):

Բացականչական նշանի փոխարեն կարող է նաև շեշտ դրվել՝ հիմնականում կոչական ձայնարկությունների վրա. *Քե՛յ*, ազա՞հ մարդ, *իե՛յ*, ամգո՞հ մարդ, // Միտքդ երկար, խելքդ՝ կարծ (ՅԹ, 215): Բազմակի անդամներից ու միավորներից յուրաքանչյուրի վրա դրվում է բացականչական նշան, քանի որ դրանք շարահյուսական նույն գործառույթն են կատարում. Դե, *լա՛վ, լա՛վ*, ամո՞թ է, մարդիկ կմտածեն, թե կրվում ենք (ԺՅ, 60): *Վա՛յ, վա՛յ, Սոսի՛ ջան, ինձ մի՛ սպանի* (ՅԹ, 204):

Զայնարկությունները, վերաբերականները և հարցահարաբերական դերանունները սովորաբար դրվում են նախադասության սկզբում, սակայն դրանք կարող են լինել միջադաս, խիստ հազվադեպ՝ նաև վերջադաս՝ Կորչելը, *անշու՛շն*, աղետ է ահեղ (ՊՍ, 58): Մոտենում է, քոյլ իմ, *այս*, իրիկունս միջամած, // Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից (ԵԶ, 14): Ես ծեզ այդ վիճակից *ինչպե՞ն* հանեմ, ծիե՞ր, // Լաց զսպեմ ու ծեր ցա՞վը տանեմ, ծիե՞ր (ՊՍ, 31): Գնում ենք, *էիե՛յ*:

Այսպիսով՝ բովանդակության պլանում բացականչական նախադասությունները առանձնանում են նրանով, որ արտաքերպիւմ են բացականչական հնչերանգով, իսկ արտահայտության պլանում՝ նրանով, որ դրանց կազմում լինում են ձայնարկություններ, վերաբերականներ և հարցահարաբերական դերանուններ, թեև կարող են նաև չլինել: Այդ դեպքում նման նախադասությունները արտահայտության պլանում, այսինքն՝ իրենց կառուցվածքով համընկնում են պատմողականներին և նրանցից տարբերվում են հնչերանգով:

### Նամառոտագրություններ

ԴՂ- Դերենիկ Դեմիրճյան, Երկեր, 1985:

ԵԶ-Եղիշե Զարենց, Երկեր, Երևան, 1983:

ԺԱ-ԺԻՐԱՅՐ Անանյան, «Տաքսի-տաքսի», Երևան, 1987:  
ՃՀ-ԺԻՐԱՅՐ Հարությունյան, Ընտիր Երկեր, Երևան, 1988:  
ԼԲ-Լևոն Բլրուսյան, «Գիղը սիրո», Երևան, 2004:  
ՀԹ-Հովհաննես Թումանյան, Ընտիր Երկեր, Երևան, 1985:  
ՊՍ-Պարույր Սևակ, Երկեր, Երևան, 1982:  
ՍԿ-Սիլվա Կապուտիկյան, «Իմ Էջը», Երևան, 1968:  
ՎՏ-Վահան Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1985:

### **Բանալի բառեր - հայոցական, բացականչական նախադասություն**

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Աբեղյան Մ., Երկեր, Զ հատոր, Եր., 1974:
2. Աբեղյան Մ., Յայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
3. Աբրահամյան Մ., ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975:
4. Աբրահամյան Մ., Առաքելյան Վ., Քոյսյան Վ., Յայոց լեզու, հատոր Բ, Եր., 1975:
5. Աբրահամյան Մ., Պառնասյան Ն., Օհանյան Յ., Բաղիկյան Խ., ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Եր., 1976:
6. Առաքելյան Վ., Յայերենի շարահյուսություն, Եր., 1958:
7. Ասատրյան Մ., ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987:
8. Գարեգինյան Գ., ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:
9. Գյուլբուրդյան Ս., ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988:
10. Եզեկյան Լ., Յայոց լեզու, Եր., 2007:
11. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2003:
12. Իշխանյան Ռ., Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր., 1986:
13. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
14. Պապոյան Ա., Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Եր., 1968:
15. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության իմանունքներ, հատոր 1, 2, Եր., 1990, 1991:
16. Զահորկյան Գ., ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974:

**СТРУКТУРНЫЕ И СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ  
ВОПРОСИТЕЛЬНЫХ И ВОСКЛИЦАТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В  
СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

С. Г. КАРАПЕТЯН

*Преподаватель немецких языков ГПУА*

Статья посвящена структурно-семантическим особенностям вопросительных и восклицательных предложений в современном армянском языке. Вопросительные предложения выражают вопрос и отличаются своей напряженной интонацией. Они образуются при помощи вопросительных местоимений, берущих на себя логическое ударение и вопросительную интонацию. Поскольку вопрос может преследовать самые разные цели, в грамматике выделяются разные типы вопросительных предложений.

Восклицательные предложения отличаются прежде всего своей особой восклицательной интонацией. Большая часть этих предложений представляет собой пожелания, пословицы, поговорки, заклинания и другие сочетания.

**THE STRUCTURAL AND SEMANTIC PECULIARITIES OF INTERROGATIVE  
AND EXCLAMATORY SENTENCES IN MODERN ARMENIAN**

S. H. KARAPETYAN

*ASPU Lecturer of the Chair of German Languages*

The article refers to the semantic and structural peculiarities of interrogative and exclamatory sentences in Modern Armenian. Interrogative sentences generally express the speaker's inquiry and differ from other sentences by strained intonation. Interrogative sentences are mainly formed with the help of interrogative pronouns on which fall the logical stress of the sentence and the interrogative intonation. As long as the inquiry can be done in different purposes, according to that, the grammarians differentiate between various interrogative sentences.

Exclamatory sentences first of all stand out by their unique intonation. They are uttered by raising-falling exclamatory intonation. Most of the exclamatory sentences are desires, sayings, blessings, curses and other ready combinations.